ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 05.12.2013թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-45/13 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-45/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ի կողմից 15.11.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-45/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ն հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով

շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար 2013թ. հոկտեմբերի 31-ին ժամը 11:30-ին տեղի ունեցած գնային առաջարկների հայտերի բացման ժամանակ հայտ են ներկայացրել թվով 9 կազմակերպություններ: «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ի կողմից NN 8, 11, 12, 13, 14, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 28, 29, 30, 31, 32, 35, 36, 37, 39, 40, 41, 43, 46, 47, 48, 50, 51, 55, 56, 57, 58, 59, 67, 68 չափաբաժինների համար ներկայացված գնային առաջարկները եղել են ամենացածրը: Բայց, համաձայն 2013թ. նոյեմբերի 14-ին էլ. փոստով Ընկերությանն ուղարկված 2013թ. նոյեմբերի 13-ի N 2 արձանագրության, «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ի կողմից ներկայացված NN 8, 11, 12, 13, 14, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 28, 29, 30, 31, 32, 35, 36, 37, 39, 40, 41, 43, 46, 47, 48, 50, 51, 55, 56, 57, 58, 59, 67, 68 չափաբաժիններով համարժեք ներկայացված ապրանքատեսակները դիտարկվել են որպես ոչ համարժեք՝ համաձայն մասնագիտական եզրակացության:

«Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ն հայտնել է, որ վերջինիս կողմից ներկայացված ապրանքատեսակները լիովին համարժեք են Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին:

«Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ն որպես բողոքի փաստացի և իրավական հիմք նշել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասը և ՀՀ կառավարության 10.02.2011թ. 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 110-րդ կետի 4-րդ ենթակետը՝ բողոքը քննող հանձնաժողովին խնդրելով «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.11.2013թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 2 արձանագրությամբ «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի NN 8, 11, 12, 13, 14, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 28, 29, 30, 31, 32, 35, 36, 37, 39, 40, 41, 43, 46, 47, 48, 50, 51, 55, 56, 57, 58, 59, 67, 68 չափաբաժիններով ներկայացված ապրանքատեսակները ոչ համարժեք համարելու որոշումը չեղյալ հայտարարել և «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ին ճանաչել այդ չափաբաժինների մասով հաղթող մասնակից:

2. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 18.11.2013թ. N 04/032-1702 գրությամբ դիմել է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 15.11.2013թ. «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ը 26.11.2013թ. N 09/3803 գրությամբ «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից 31.10.2013թ. կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով բժշկական սարքավորումների և գործիքների գնման ընթացակարգի հայտերի բացման նիստին սահմանված ժամկետում հայտ են ներկայացրել թվով 9 կազմակերպություններ, այդ թվում նաև «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ն, որը ներկայացրել է գնային առաջարկ թվով 44 չափաբաժինների համար, որոնցից 43-ը՝ որպես համարժեք: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ի կողմից ներկայացված որպես համարժեք դիտարկվող որոշ չափաբաժինների համար տեխնիկական բնութագրերը ոչ լիարժեք էին և կազմված էին ոչ սահմանված կարգով՝ մեկ չափաբաժնի համար ներկայացվել են երկու տարբեր արտադրության ապրանքատեսակ, այնուամենայնիվ, գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել ուղարկել առաջարկված տարբերակները մասնագիտական եզրակացության: Ուսումնասիրությունների ընթացքում մասնագետներին չի հաջողվել ոչ մի կերպ ստանալ տեղեկատվություն «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ի կողմից առաջարկված որպես համարժեք «PROMED» և «DENTASH» կազմակերպությունների կարանյութերի վերաբերյալ: Բացի այդ, կազմակերպության կողմից կից չեն ներկայացվել «PROMED» և «DENTASH» կարանյութերի կատալոգներ, որոնք պարունակում են ապրանքատեսակների հստակ տեխնիկական բնութագրերը: Ուստի ստացված մասնագիտական եզրակացության հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ վիրաբույժները չեն կարող փորձարկել իրենց համար անհայտ կարանյութերը հիվանդների նկատմամբ, գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել համարժեք չդիտարկել «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ի կողմից ներկայացված թվով 44 չափաբաժիններից 43-ը: «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ը Կենտրոնին խնդրել է

«Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ի կողմից 15.11.2013թ. ներկայացված բողոքը ճանաչել անհիմն:

3. ԳԲԽ-45/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ի կողմից 15.11.2013թ. Կենտրոնին ներկայացված բողոքը մերժել:

4. ԳԲԽ-45/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-45/13 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ի (այսուհետև՝ նաև Ընկերություն) կողմից 15.11.2013թ. ներկայացված բողոքը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ նաև Հրավեր), գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 31.10.2013թ. ժամը 11:30-ին կայացած նիստի N 1 և 13.11.2013թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 2 արձանագրությունները, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ նաև Պատվիրատու) Կենտրոնին 26.11.2013թ. ներկայացրած N 09/3803 գրությունը և կից փաստաթղթերը, «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ի կողմից ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար բժշկական սարքավորումների և գործիքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև՝ նաև Ընթացակարգ): Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների հայտ է ներկայացրել նաև «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ն:

«Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացված գնային առաջարկով՝ NN 8-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 17-րդ, 18-րդ, 19-

րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 28-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 35-րդ, 37-րդ, 39-րդ, 40-րդ, 41-րդ, 43-րդ, 46-րդ, 47-րդ, 48-րդ, 49-րդ, 50-րդ, 51-րդ, 54-րդ, 55-րդ, 56-րդ, 57-րդ, 58-րդ, 59-րդ, 60-րդ, 62-րդ, 64-րդ, 66-րդ չափաբաժիններով գնման ենթակա ապրանքատեսակների մասով որպես համարժեք առաջարկել է «DENTASH» կամ «PROMED» ֆիրմային անվանում կրող ապրանքատեսակներ, իսկ NN 11-րդ, 36-րդ, 67-րդ և 68-րդ չափաբաժիններով՝ առաջարկել է համարժեք ապրանքատեսակներ, առանց ֆիրմային անվանման որևէ նշում կատարելու՝ միաժամանակ ներկայացնելով վերը նշված չափաբաժիններով գնման ենթակա ապրանքատեսակների տեխնիկական հատկանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Հանձնաժողովի 31.10.2013թ. ժամը 11:30-ին կայացած նիստի N 1 արձանագրության 2-րդ կետով որոշում է կայացվել Ընթացակարգի հայտերի ուսումնասիրության, ինչպես նաև մասնակիցների կողմից որպես համարժեք ներկայացված ապրանքատեսակների վերաբերյալ մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով հայտերի գնահատման նիստը հետաձգել մինչև համապատասխան մասնագիտական եզրակացություն ստանալը:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի Կլինիկայի ղեկավար Մ. Միրիջանյանը 12.11.2013թ. գրությամբ ԵՊԲՀ Կլինիկական գծով պրոռեկտոր Ա. Մինասյանին հայտնել է, որ «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ի կողմից ներկայացված «PROMED» և «DENTASH» որպես կարանյութ արտադրող կազմակերպությունների վերաբերյալ բացակայում է պատշաճ տեղեկատվություն ինչպես համացանցում, այնպես էլ տարբեր վիրաբույժների մասնագիտական պրակտիկայում: Բացակայում են «PROMED» և «DENTASH» կարանյութերի կատալոգները, իսկ մնացած նշված բնութագրիչները բավարար չեն համեմատության համար, քանի որ անհրաժեշտ է իմանալ հետևյալ առանձնահատկությունները՝

1. Ասեղի իզիսլայդ ծածկույթի անհրաժեշտությունը,
2. Հատուկ մետաղի համաձուլվածքը, որը բացառում է ասեղի կոտրումը և ծռումը,
3. Թելերի միջին ներծծման ժամանակահատվածը՝ 50%-18 օր, 90%-24 օր, 100%-28-35 օր,
4. Սինթետիկ և ոչ սինթետիկ հատկությունները,
5. Կարաթելերի հյուսվածքի ձևը,
6. Կարաթելերի ամրության աստիճանը, թե քանի կգ./սմ վրա,

7. Թելերի արտաքին մակերևույթի հարթության չափը,

Նշվել է նաև, որ «PROMED» և «DENTASH» կարանյութերը, եթե այդպիսիք գոյություն ունեն, ոչ մի կերպ չեն կարող դիտարկվել որպես համարժեք:

Հանձնաժողովի 13.11.2013թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 2 արձանագրությամբ «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ի կողմից համարժեք ներկայացված ապրանքատեսակներից որպես ոչ համարժեք են դիտարկվել Ընթացակարգի NN 8-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 28-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 39-րդ, 40-րդ, 41-րդ, 43-րդ, 46-րդ, 47-րդ, 48-րդ, 50-րդ, 51-րդ, 55-րդ, 56-րդ, 57-րդ, 58-րդ, 59-րդ, 67-րդ և 68-րդ չափաբաժիններով ներկայացված ապրանքատեսակները՝ համաձայն մասնագիտական եզրակացության:

«Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ն 15.11.2013թ. Կենտրոնին ներկայացված բողոքով նշել է, որ Ընկերության կողմից վերը նշված չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկներն ամենացածրն են եղել, իսկ ապրանքատեսակները եղել են լիովին համարժեք գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին:

Պատվիրատուն 26.11.2013թ. Կենտրոնին ներկայացրած N 09/3803 գրությամբ հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով բժշկական սարքավորումների և գործիքների գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ի գնային առաջարկում թվով 44 չափաբաժիններից 43-ի համար ներկայացվել են համարժեք ապրանքատեսակներ: Գնահատող հանձնաժողովը որոշել է առաջարկված ապրանքատեսակներն ուղարկել մասնագիտական եզրակացության, քանի որ Ընկերության կողմից ներկայացված որպես համարժեք դիտարկվող որոշ չափաբաժինների համար ներկայացված տեխնիկական բնութագրերը եղել են ոչ լիարժեք և կազմվել են ոչ սահմանված կարգով՝ մեկ չափաբաժնի համար ներկայացվել է 2 տարբեր արտադրության ապրանքատեսակ:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ ուսումնասիրությունների արդյունքում մասնագետներին չի հաջողվել տեղեկատվություն ստանալ «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ի կողմից առաջարկված որպես համարժեք «PROMED» և «DENTASH» տեսակի կարանյութերի վերաբերյալ:

Կենտրոնում 02.12.2013թ. ժամը 15:00-ին կազմակերպված լսումների ընթացքում ԳԲԽ-45/13 բողոքը քննող հանձնաժողովի այն հարցին, թե ինչն է հիմք հանդիսացել «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը թվով 43 չափաբաժինների մասով մերժելու համար, Պատվիրատուի ներկայացուցիչը պատասխանեց, որ Հանձնաժողովը հիմք է ընդունել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի Կլինիկայի ղեկավարի կողմից 12.11.2013թ. տրված եզրակացությունը:

Հանձնաժողովի այն հարցին, թե առկա՞ է արդյոք այլ եզրակացություն, որի հիման վրա գնահատող հանձնաժողովը բողոքաբեր ընկերության հայտով ներկայացրած ապրանքատեսակները գնահատել է որպես ոչ համարժեք, Պատվիրատուի ներկայացուցիչը պատասխանեց, որ գնահատման համար որպես հիմք որևէ այլ եզրակացություն առկա չէ:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգին որպես հնարավոր մասնակից գրանցված կազմակերպություններին ուղարկված հրավերով (ծանուցմամբ) սահմանվել է, որ մասնակիցների կողմից համարժեք ապրանքներ ներկայացվելու դեպքում գնային առաջարկում անհրաժեշտ է ներառել նաև դրանց տեխնիկական բնութագրերի նկարագրությունները՝ պարտադիր նշելով «համարժեք» բառը:

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած գնային առաջարկով ընկերությունն առաջարկել է համարժեք ապրանքներ, սակայն չի նշել առաջարկված համարժեք ապրանքների տեխնիկական բնութագրերի ամբողջական նկարագրությունները: Բացի այդ, Կենտրոնում 02.12.2013թ. ժամը 15:00-ին կազմակերպված լսումների ընթացքում ԳԲԽ-45/13 բողոքը քննող հանձնաժողովի այն հարցին, թե արդյո՞ք «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած գնային առաջարկով ներկայացված՝ ըստ բողոքաբեր ընկերության որպես համարժեք ապրանքատեսակների բնութագրերը համապատասխանում են Ընթացակարգի տեխնիկական բնութագրով սահմանված ապրանքատեսակների բնութագրերին, ընկերության տնօրենը պատասխանեց, որ չգիտի և ստույգ չի կարող ասել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:
- 2-րդ մասի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 110-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովի կողմից որոշվում և հայտարարվում են առաջին և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները: Ընտրված մասնակիցը (առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը) որոշվում է հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ինչ վերաբերում է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի Կլինիկայի ղեկավար Մ. Միրիջանյանի կողմից 12.11.2013թ. ԵՊԲՀ Կլինիկական գծով պրոռեկտոր Ա. Մինասյանին ներկայացված գրությունը Պատվիրատուի կողմից որպես մասնագիտական եզրակացություն համարելուն, ապա գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ այն չի կարող հանդիսանալ մասնագիտական եզրակացություն, քանի որ նշված գրությամբ չի հիմնավորվել «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած գնային առաջարկով առաջարկվող ապրանքատեսակների հրավերով նախատեսված ապրանքատեսակներին համարժեք չլինելու փաստը, այլ ընդամենը նշվել է, որ «PROMED» և «DENTASH» որպես կարանյութ արտադրող կազմակերպությունների վերաբերյալ բացակայում է պատշաճ տեղեկատվություն ինչպես համացանցում, այնպես էլ տարբեր վիրաբույժների մասնագիտական պրակտիկայում, ինչպես նաև բացակայում են «PROMED» և «DENTASH» կարանյութերի կատալոգները, իսկ մնացած նշված բնութագրիչները բավարար չեն համեմատության համար, քանի որ անհրաժեշտ է իմանալ՝ ասեղի իզիսլայդ ծածկույթի անհրաժեշտությունը, հատուկ մետաղի համաձուլվածքը, որը բացառում է ասեղի կոտրումը և ծռումը, թելերի միջին ներծծման ժամանակահատվածը՝ 50%-18 օր, 90%-24 օր, 100%-28-35 օր, սինթետիկ և ոչ սինթետիկ հատկությունները, կարաթելերի հյուսվածքի ձևը,

կարաթելերի ամրության աստիճանը, թե քանի կգ./սմ վրա, թելերի արտաքին մակերևույթի հարթության չափը, առանձնահատկությունները:

Այսինքն, համացանցում, ինչպես նաև տարբեր վիրաբույժների մասնագիտական պրակտիկայում «PROMED» և «DENTASH» որպես կարանյութ արտադրող կազմակերպությունների վերաբերյալ պատշաճ տեղեկատվության և «PROMED» և «DENTASH» կարանյութերի կատալոգների բացակայությունը, ինչպես նաև ապրանքնատեսակների համարժեքությունը գնահատելու համար գրությամբ նշված առանձնահատկությունների բացակայությունը չի կարող դիտարկվել որպես Հրավերով սահմանված ապրանքատեսակներին ոչ համարժեք դիտարկելու փաստ, իսկ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի Կլինիկայի ղեկավար Մ. Միրիջանյանի կողմից 12.11.2013թ. ԵՊԲՀ Կլինիկական գծով պրոռեկտոր Ա. Մինասյանին ներկայացված գրությամբ չեն մատնանշվել կոնկրետ տեխնիկական հատկանիշների և ապրանքները բնութագրող այլ բաղադրիչների այն էական անհամապատասխանությունները, որոնց հիման վրա «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ի կողմից առաջարկված ապրանքատեսակները չէին կարող համարվել որպես համարժեք Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված ապրանքատեսակներին:

Այսպիսով, թեև պատվիրատուի կողմից չներկայացվեցին «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ի առաջարկած ապրանքների՝ Ընթացակարգի հրավերով նախատեսված գնման առարկային ոչ համարժեք գնահատելու բավարար հիմնավորումներ, սակայն բողոքաբեր ընկերությունն էլ չներկայացրեց գնման առարկայի բնութագրերին ընկերության կողմից առաջարկվող ապրանքների համարժեքությունը հիմնավորող բավարար ապացույցներ: Հետևաբար գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.11.2013թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 2 արձանագրությամբ «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի NN 8, 11, 12, 13, 14, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 28, 29, 30, 31, 32, 35, 36, 37, 39, 40, 41, 43, 46, 47, 48, 50, 51, 55, 56, 57, 58, 59, 67, 68 չափաբաժիններով ներկայացված ապրանքատեսակները ոչ համարժեք համարելու որոշումը չեղյալ հայտարարելու և «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ին այդ չափաբաժինների մասով հաղթող մասնակից ճանաչելու մասին «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ի կողմից 15.11.2013թ. Կենտրոնին ներկայացված բողոքն անհիմն է:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասը գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ի կողմից 15.11.2013թ. Կենտրոնին ներկայացված բողոքը մերժել:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Գոռ Ենոքյան

Անդամ՝ Էդվարդ Գրիգորյան